ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2026 թվականի մարտի 3-ի որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը «**ՍՕՍ ՄԳ ՀԲՀ ԿՄ-ԳՀԾՁԲ**-2026/04»

«ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ Կոտայքի մասնաճյուղի կարիքների համար գնանշման հարցման ընթացակարգով հոգեբանական ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՍՕՍ ՄԳ ՀԲՀ ԿՄ-ԳՀԾՁԲ-2026/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2026 թվականի մարտի 2-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2026 թվականի մարտի 3-ին տրամադրված պարզաբանումները՝

Հարցադրումներ N 1

«Գնման գործընթացի շրջանակում խնդրում ենք հստակեցնել հետևյալ հարցերը՝ ծառայությունների իրականացման կազմակերպման և պայմանների վերաբերյալ.

- Ծառայությունների ո՞ր բաժիններն են թույլատրելի իրականացնել առցանց (online) ձևաչափով: Կա՞ արդյոք սահմանափակում անհատական սուպերվիզիաների, խմբային սուպերվիզիաների, դասընթացների կամ թերապևտիկ հանդիպումների մասով:
- «Արտագնա այց» հասկացությունը կոնկրետ ի՞նչ է ենթադրում: Խնդրում ենք հստակեցնել՝
– իրականացման վայրը,
– ձևաչափը,
– արդյոք ճանապարհածախսը, կեցությունն ու սնունդը ներառվա՞ծ են պայմանագրային արժեքում, թե փոխհատուցվում են առանձին:
- Պահանջվու՞մ է արդյոք ծառայությունների իրականացման համար նախապես ներկայացնել տարեկան կամ եռամսյակային գրավոր պլան և ժամանակացույց (work plan & schedule), թե ծառայությունների իրականացումը կազմակերպվելու է պատվիրատուի հետ ընթացիկ համաձայնեցման հիման վրա:
- Ծրագրի իրականացման շրջանակում նախատեսվում է ներգրավել մի քանի մասնագետների (հոգեբաններ և լոգոպեդներ)՝ պայմանագրի մեկ ընդհանուր պատասխանատուի ղեկավարությամբ: Արդյոք այս ձևաչափը ընդունելի՞ է, թե նախապատվությունը տրվում է մեկ մասնագետի կողմից ծառայության մատուցմանը:
- Ինչպե՞ս է նախատեսվում յուրաքանչյուր իրականացված ծառայության փաստաթղթավորումը:
– Կա՞ հաստատված գրանցման ձևաթուղթ,
– Պահանջվու՞մ է մասնակիցների ստորագրությունների հավաքագրում,
– Անհրաժե՞շտ է ներկայացնել մասնագիտական եզրակացություններ կամ ամփոփ գրառումներ:
- Նախատեսվու՞մ է արդյոք պարբերական հաշվետվություն (եռամսյակային, կիսամյակային կամ տարեկան): Եթե այո՝
– Ի՞նչ բովանդակությամբ (քանակական ցուցանիշներ, որակական վերլուծություն, դեպքերի նկարագրություն և այլն),
– Ի՞նչ ծավալով,
– Ի՞նչ ձևաչափով (հաստատված template և այլն)»:

Պարզաբանում N 1

«-Բոլոր բաժինները իրականացվում են դեմ առ դեմ սկզբունքով, առցանց ձևաչափը կարող է դիտարկվել միայն առանձին դեպքերում փոխադարձ համաձայնությամբ: Բոլոր ծառայությունները մատուցվում են ՀՀ օրենքի և կազմակերպության հայեցակարգերին համաձայն:

-Արտագնա նշանակում է ՍՕՍ մանկական գյուղեր ՀԲՀ Կոտայք մասնաճյուղի տարածքից դուրս կազմակերպվող դասընթացներ կամ սուպերվիզիաներ, իրականացման վայրը ՀՀ տարածքում գործող հյուրանոցներ կամ դասընթացի կենտրոններ: Ձևաչափը նույնն է բոլոր դեպքերում: Արտագնա հանդիպումների բոլոր ծախսերը հոգում է Պատվիրատուն և պայմանագրի արժեքում ներառված չէ:

-Ծառայությունները իրականացվում է փոխադարձ համաձայնությամբ համաձայն մրցույթի նկարագրությունում նշված քանակների:

-Ծրագիրը հնարավոր է իրականացնել միայն համապատասխան մասնագետների առկայության պարագայում: Կազմակերպության տնօրենի ղեկավարությամբ:

-Բոլոր անհրաժեշտ ձևաթղթերը տրամադրվում են ՍՕՍ մանկական գյուղեր ՀԲՀ Կոտայք մասնաճյուղի կողմից: Մասնակիցների ստորագրությունները հավաքագրվում են, ըստ անհրաժեշտության, պատվիրատուի պահանջով կարող է կարիք լինել ներկայացնել մասնագիտական եզրակացություն»:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել

«**ՍՕՍ ՄԳ ՀԲՀ ԿՄ-ԳՀԾՁԲ**-2026/04» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Այվազյանին:

Հեռախոս +374 99 04 12 92,
Էլ. փոստ legesgnumner@gmail.com
Պատվիրատու՝ «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ Կոտայքի մասնաճյուղ